

- 184 Անդ ւ' Արամանք Պէշիկտաշի
Ոչ ունելով ղեկեղեցի՝
Գային լըսել Ղ^օքարող Սարգսի,
Եւ կատարել ըզպարտ կրօնի:
- 185 Համբուն նոքին միշտ լինէին
Մեծ մըխիթար Սարգսի անձին.
Ողորմութեամբ յեկեղեցին,
Եւ յարգանք իսկ առտընին:
- 186 Երբեմն երբեմն անտի Սարգիս
Երթեալ շրջէր ի մեծ Պօլիս
Առ ողջունել զիւր սիրելիս
Եւ յայդորել զաւագս Աղդիս:
- 187 Այսպէս վարեալ նա զիւր կենցաղ
Քարոզելով միշտ անդանդաղ,
Վայելելով յաղդ իւր յաճախ,
Անցուցանէր զաւուրս ուրախ:
- 188 Անդ նա երից ամաց ըզկ^օնի
Յետ մարդելոյ զիս ըստ կարի
Հաճութեամբ նոյն Պատրիարքի
Տայր ինձ ըզկարգ քահանայի:
- 189 Այս ինչ դիպէր յամին հազար,
Յոր եօթն հարիւր վաթսունն համար
Թըւով իննիւ իսկ կըցեալ՝ կայր
Յետ Ապրիլի ըստ հին տօմար:
- 190 Զայն օր Հայոց եկեղեցին
Մուտն ի վերապ Լուսաւորչին
Ընդ բաղմազան տանջանս նորին
Յիշատակէր ըստ պատշաճին: